68-ՐԴ ՆԻՍՏ

11 փետրվարի 1919Թ.

Նախագահող - Նիստը հայտարարում եմ բացված:

Օրակարգի հարցերն են.

1. Զեկուցում Հայաստանի Խորհուրդ մտած գործերի մասին.
2. Արտաքին գործոց մինիստրի զեկուցումը.
3. Զեկուցում ֆինանսական հանձնաժողովի Կուբանում և Դենիկինի մոտ ներկայացուցիչ ուղարկելու մասին և 5%-աբեր կարճ ժամանակվա պետական գանձարանից 10 միլիոնի պարտավորագրեր բաց թողնելու մասին.
4. Պատասխանը ներքին, արտաքին և զինվորական մինիստրների՝ Հայ ժող[ովրդական] կուսակցության ֆրակցիայի հարցման .
5. Խմբագրական հանձնաժողովի զեկուցումը ֆելդշերական կուրսերի և հաշմանդամ զինվորների օրինագծի մասին.
6. Ընթացիկ գործեր:

Քարտուղար - Նախագահությունը ստացել է հետևյալ գրությունները. խոց[իալ]-դեմոկրատական ֆրակցիան առաջարկում է պետական կոնտրոլյոր ընտրելու հարցը մտցնել օրակարգի մեջ: Նույն ֆրակցիան իր հրաժարված անդամ Մալխասյանի տեղ առաջարկում է ընդունել Դուրգարյանին: Այնուհետև կառավարությունն առաջարկում է զինվորության բնակարան մատակարարող վարչության տալ 14.000 ռուբլի վարկ: Ապա Երևանի քաղաքագլուխը խնդրում է որոշել ռեկվիզիցիոն հանձնաժողովի իրավասության սահմանները: Իզմայիլովի մայրը խնդրում է իր հանգուցյալ որդու թաղման ծախսերը տալ:

Նախագահող - Խոսքը պատկանում է Մինիստր-նախագահին:

Մինիստր-նախագահ - Մեզ այցելեց բրիտանական զորքերի գլխավոր հրամանատարը Անդրկովկասում՝ գեներալ Ուոկկերը: Երկար տեսակցություն ունեցանք հետը: Տեսակցության ներկա էին անգլիական գեներալ Ասսերը և երկու անգլիական սպա, իսկ կառավարության կողմից՝ մինիստրներ Տիգրանյանը, Ախվերդյանը, Մելիք-Ղարագյոզյանը և ես: Խոսակցությունը թարգմանի միջոցով էր: Ես պատմեցի գեներալ Ուոկկերին մեր երկրի ծանր կացության և մեր անհրաժեշտ, անհետաձգելի կարիքների մասին: Ծանրացա մասնավորապես երեք կետի վրա՝ հացի, գաղթականության և երկաթուղային հաղորդակցության: Ասացի, որ

այդ խնդիրները, որ կյանքի և մահվան հարց են մեր երկրի համար, մենք չենք կարող լուծել մեր սեփական ուժերով, որ մեզ պետք է օգնեն Համաձայնության պետությունների ներկայացուցիչները, մասնավորապես բրիտանական հրամանատարությունը Անդրկովկասում: Ասացի, թե ինչ մեծ անհամբերությամբ սպասում էր ժողովուրդը դաշնակիցների գալուն և ինչ մեծ հույսեր էր դրել: Ապա պարտք համարեցի չթաքցնել, որ վերջին ժամանակները ժողովրդական մասսաների մեջ առաջ է եկել տարակուսանք, մի տեսակ կասկածոտ վերաբերմունք, հիասթափմունքի զգացում դեպի դաշնակիցների գործելակերպը: Պատճառն այն է, որ մեր սպասած օգնությունը դանդաղում է և չի կատարվում կարիքին համեմատ չափով:

Գեներալ Ուոկկերը պատասխանեց, որ այդ կասկածները միանգամայն անհիմն են, որ դաշնակից պետությունները և մասնավորապես բրիտանական հրամանատարությունը տեղյակ է մեր ծանր կացության մասին և ձեռք է առել բոլոր հնարավոր միջոցները՝ մեզ օգնություն գալու համար: Եթե օգնությունը մինչև հիմա հարկավոր չափերով չի կատարվել, դրա պատճառը այն չէ, որ դաշնակիցները անուշադիր են դեպի մեր կարիքները, այլ այն, որ եղել են և այսօր էլ կան դժվարություններ և արգելքներ, որ դեռևս անկարելի է եղել վերացնել:

Գեներալ Ուոկկերի խոսքերը միանգամայն համոզեցուցիչ էին: Թե' ես և թե' խոսակցության ներկա եղող մյուս մինիստրները մի ավելորդ անգամ ևս համոզվեցինք, որ դաշնակիցների վերաբերմունքը դեպի Հայաստան ինչպես անցյալում եղել է բարյացակամ, այսօր էլ մնում է նույնը: Որ դաշնակիցները չեն խնայում ոչ աշխատանք, ոչ նյութական միջոցներ մեզ օգնություն տալու համար և որ ամենամոտ ապագայում մենք կտեսնենք նրանց ջանքերի կենդանի հետևանքները:

Պարտք եմ համարում անել այս հայտարարությունը պառլամենտի ամբիոնից: Հույս ունեմ, որ այս իմ խոսքերից հետ կփարատվեն այն ծանր կասկածները, որ բույն են դրել ոմանց սրտերում: Մենք շատ աներախտագետ կլինենք, եթե մեզ ցույց տրված բարյացակամությանը պատասխանենք անհիմն կասկածներով: Գիտեմ, որ հայ ժողովուրդը աներախտագետ չէ, և որ եղած տարակուսանքները հետևանք են միայն անգիտակցության և դրությանը անտեղյակ լինելուն:

Ի վերջո պետք է ավելացնեմ, որ գեներալ Ուոկկերը նշանակել է իբրև իր ներկայացուցիչ Երևանում մի բարձրաստիճան սպա՝ գեներալ Ասսերը: Սա մի նոր ապացույց է բրիտանական բանակի ուշադիր և բարյացակամ վերաբերմունքի դեպի մեզ:

Ազատյան - Հեռագրական գործակալությունը հայտնեց, որ խոսվել է նաև Հայաստանի և Ադրբեջանի կոնֆերանս կազմելու մասին՝ սահմանագծման հարցը որոշելու համար: Խնդրում եմ զեկուցեք նաև այս մասին:

Մինիստր-նախագահ - Ճիշտ է, այդպիսի խոսակցություն եղել է: Ինչպես հայտնի է, մեր և Ադրբեջանի միջև մի որոշ տերիտորիայի առթիվ վեճ կա: Ուոկկերը հայտնեց, որ այս վեճն իր վերջնական լուծումը կստանա Փարիզի կոնֆերանսում: Սակայն նախքան այդ, նա դիմում է մեզ՝ փոխադարձ համաձայնությամբ ժամանակավոր սահմանագծում կատարել: Մենք հայտնեցինք մեր պատրաստակամությունը: Կառավարությունն առանց խորհրդի տվեց այդ խոսքը, որովհետև սահմանագծումը ժամանակավոր բնույթ է կրելու: Այնուհետև մենք հայտնեցինք գեներալին, որ դժվար թե առանց միջնորդության մենք և Ադրբեջանը համաձայնության գանք: Նա համաձայնեց միջնորդել միմիայն այն պայմանով, որ չհամաձայնվելու դեպքում երկու կողմերն էլ պիտի ընդունեն անգլիական բարձր հրամանատարության որոշումները: Մենք համաձայնվեցինք այդ պայմանին: Ուոկկերը այս մասին կխոսի Ադրբեջանի հետ էլ և ապա մի չեզոք տեղ, որպիսին Թիֆլիսն է, կոնֆերանս կլինի մեր և Ադրբեջանի ներկայացուցիչների:

Բաբալյան - Ձեր զեկուցումից չիմացանք Նախիջևանի գաղթականության վերադարձի մասին: Պետք է այս խնդրի վրա լուրջ ուշադրություն դարձնել, որովհետև շուտով սովից նրանք կոչնչանան և ապա վերադառնալով հայրենիք, գարնանացանք չեն կարող անել: Ապա, արդյո՞ք կառավարությունը Թիֆլիսն է համարում չեզոք վայր և արդյո՞ք կոնֆերանսի համար դիրեկտիվներ պիտի ստանա խորհրդից:

Մինիստր-նախագահ - Իմացվեց, որ անգլիացիք լավ ծանոթ են մեր գաղթականության դրության հետ: Նրանք շատ կցանկանային գաղթականներին վերադարձնել, բայց թե այժմ չեն վստահանում անել այդ՝ անապահով դրության պատճառով:

Այնուհետև Ուոկկերը հայտնեց, որ գաղթականների վերադարձը շուտ կլինի, բայց թե երբ, դա անհայտ է: Գալով Բաբալյանի մյուս հարցին, պիտի ասեմ, որ մենք խորը մտածմունքի մեջ չընկանք, երբ Թիֆլիսը հայտնվեց չեզոք: Դա մեզ համար ավելի չեզոք է, քան Գանձակը, Բաքուն: Իսկ այն հարցը, թե ինչ սկզբունքներով պիտի բանակցենք, մենք հայտնել ենք Ուոկկերին, որ մեր սահմանները պիտի լինեն հայության էթնիկական տարածումը: Եթե խորհուրդը կարիք է զգում առանձին հրահանգներ տալու, այն ժամանակ կարող է մինչև կոնֆերանս անել այդ:

Նախագահող - Լսում ենք ֆինանսական հանձնաժողովի զեկուցումը:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Կառավարությունը առաջարկել է մի օրինագիծ Դենիկինի և Կուբանի մոտ դիպլոմատիական ներկայացուցիչ ունենալու մասին: Դրա համար նա տվել է հետևյալ նախահաշիվը և օրինագիծը.

Օրինագիծ
Նախահաշիվ Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի՝ կամավորական զորաբանակում և Կուբանում

Հաստատել 1919 ամի փետրվարի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչություն կամավորական զորաբանակի և Կուբանի կառավարության մոտ հետևյալ նախահաշվով.

1. Ներկայացուցիչ	1690
2. Քարտուղար	1040
3. Բնակարանի, դիվանի, ներկայացուցչության և չնախատեսված ծախսեր	10.000
Գումարն է	12.730ռուբլի

Այս հարցի քննության ժամանակ հանձնաժողովը բաժանվեց երկու մասի: Քաղաքական տեսակետից նայելով, մի մասը պնդում էր, որ որպես արտաքին քաղաքականության մի խնդիր, դա պիտի տրվի սինյորին կոնվենտին*: Մյուս մասը պնդում էր, որ կարելի է հենց անմիջապես քննել: Մեծամասնությունն էր կազմում վերջինս: Այս մասին հայտնեցի նախագահության, որ նա այս հարցը կամ տա սինյորին կոնվենտին, կամ էլ դնի խորհրդի քննության:

Ազատյան - Սա գերազանցորեն քաղաքական խնդիր է: Կուբանի և Դենիկինի՝ երկու քաղաքական հակառակորդների մոտ միաժամանակ ներկայացուցիչ ուղարկելը կարող է անմիջական ազդեցություն ունենալ մեր հաց ստանալուն վրա: Այս պատճառով էլ դրա քննությունը պիտի հանձնել սինյորին կոնվենտին:

Աղբալյան - Ի նկատի ունենալով, որ Դենիկինը և Կուբանը տարբեր տեղեր են, դրա համար էլ մենք կարծում ենք, որ երկու ներկայացուցիչ պիտի ուղարկել: Կուբանի մոտի ներկայացուցիչը պարենավորման համար նշանակություն ունի որպես պաշտոնական անձն: Ապա նա կարող է այնտեղի հայերի շահերը պաշտպանել և լուրեր ստանալով ու տալով մեզնից և նրանցից, կարող է Հայաստանին և Կուբանին իրար վերաբերմամբ լավատեղյակ դարձնել: Դենիկինի մոտ էլ ներկայացուցիչ պիտի ունենալ, քանի որ դաշնակիցները նրա հետ լավ են: Ներկայացուցիչը, իհարկե, պիտի լինի զինվորական: Այս հարցերը շատ սովորա-

* Ավագների խորհուրդ:-Ծանոթ կազմ.:

կան բնույթ ունեն: Նույնիսկ արտաքին գործոց նախարարը կարող էր առանց խորհրդին դիմելու այդ անել, եթե չլիներ վարկի խնդիրը:

Նախագահող - Հայտարարում եմ 15 րոպե ընդմիջում: Ընդմիջում:

Նախագահող - Նիստը հայտարարում եմ վերսկսված: Չայնը պատկանում է պատգամավոր Ստեփանյանին:

Հովհ. Ստեփանյան - Պատգամավորներից ոմանք առաջարկում են բավականանալ մի ներկայացուցիչ նշանակելով, բայց այդ միանգամայն աննպատակահարմար է: Մեր ներկայացուցիչը երկու քաղաքական կազմակերպությունների հետ պիտի բանակցի: Բայց այդ երկու կազմակերպությունները միանգամայն տարբեր քաղաքականություն ունեն և տարբեր կազմ: Մեր ֆրակցիան առաջարկում է Կուբանի կառավարության մոտ ունենալ դիվանագիտական ներկայացուցիչ, իսկ կամավորական բանակի մոտ ուղարկել զինվորական մի ագենտ՝ կապ պահելու համար: Ռուսաստանի վերականգնման գործում Կուբանի կառավարությունը և կամավորական բանակը տարբեր կարծիք ունեն և Կուբանի կառավարությունը որոշ հարգ և դիրք ունի դրսի աշխարհում, ուրեմն կարելի է այնտեղ ունենալ մշտական ներկայացուցիչ:

Ազատյան - Ներկայացուցիչներ ուղարկելու խնդրում կարևոր տարաձայնություններ կան, որովհետև խնդիրը մեր կառավարության արտաքին քաղաքականության է վերաբերում: Ցանկալի է իմանալ, այս խնդիրն այժմ ըստ էության է քննվում, թե՞ ոչ: Եվ եթե այո, մենք առաջարկում ենք հետաձգել, որպեսզի ավելի լավ քննվի: Մենք չգիտենք, թե ինչ ֆունկցիաներ են կատարելու այդ ներկայացուցիչները: Անհրաժեշտ է, որ մանրամասն խոսվի արտաքին գործոց մինիստրի հետ այդ խնդրի նկատմամբ: Քննության պիտի դրվի առևտրական գնումների գործը, որ մեզ համար ամենից կենսական է: Քաղցած ժողովրդի համար հաց է հարկավոր, ուրեմն մենք մարդ պետք է ուղարկենք այն երկիրը, որտեղից հաց ստանալու հույս ունենք: Ոչ մի կարիք չկա կամավորական բանակի մոտ զինվորական ագենտ ունենալ, քանի որ բանակի ապագա գործունեության ծրագիրը մեզ համար այնքան ցանկալի լինել չի կարող: Մեր ֆրակցիան հարմար է համարում ուղարկել միայն առևտրական գործակալ:

Բաբայան - Դաշնակցության ֆրակցիան առաջարկում է հենց այժմ քննել ներկայացուցիչներ ուղարկելու խնդիրը: Մեզ ամենևին չի հետաքրքրում, թե Կուբանի և կամավորական բանակի միջև ինչ տարաձայնություններ կան: Մենք միայն նրանց հետ պիտի բանակցենք մեր երկրին վերաբերող խնդիրների շուրջը:

Ազատյան - Ո՞վ է առաջարկում երկու ներկայացուցիչ ուղարկելու հարցը՝ մինիստրությունը, թե՞ դաշնակցության ֆրակցիան:

Աղբալյան - Մեր ֆրակցիան է առաջարկում երկու հոգի: Մեկի համար արդեն օրինագիծ և նախահաշիվ կա, իսկ մյուս ներկայացուցչի համար արտաքին գործերի մինիստրը նոր նախահաշիվ կտա:

Նախագահող - Ես քվեարկության եմ դնում սոց.-դեմոկրատների առաջարկը՝ այս խնդիրը հետաձգել և քննության հանձնել Ավագների խորհրդին:

Այս առաջարկը չի անցնում:

Ազատյան - Ցանկալի է իմանալ, ի՞նչ է կատարվել հացի գնումների շուրջը Հյուսիսային Կովկասում: Մենք այս հարցը տալիս ենք, որովհետև ուղարկվելիք պատվիրակության հետ կապ ունի: Եթե նրան չի հաջողվելու հաց ներմուծել մեր երկիրը, ապա կարևոր էլ չէ նրանց գնալը: Մենք հաց ենք ուզում, մեր ժողովուրդը հաց է աղերսում, և եթե այդ պատվիրակությունը դարմանելու է մեր ցավը, ոչինչ չունենք: Բայց հացի գնման խնդրում մենք թերահավատ ենք բոլոր պատվիրակությունների նկատմամբ: Հետո, ցանկալի է իմանալ, ո՞վ է Չալխուշյանը, ու՞մ կողմից է ուղարկված նա այնտեղ: Եթե նա կամովին ցանկանում է նպաստել հայ ժողովրդին, ապա գուցե հնարավոր լինի նրան ևս միացնել այդ պատվիրակությանը, մանավանդ, որ նա տեղական պայմաններին ավելի լավ է ծանոթ: Բացի այդ, ինչպես ասում են, տեղական ազդեցիկ շրջաններում նրա ազդեցությունը մեծ է և զգալի:

Մինիստր-նախագահ - Չալխուշյանը կառավարության կողմից նշանակված է Հյուսիսային Կովկասում հաց գնելու համար և այդ նպատակով մի քանի անգամ գումարներ է ուղարկված այնտեղ: Մեր ստացած լուրերի համաձայն, Հյուսիսային Կովկասում մեր ներկայացուցչին հաջողվել է իրավունք ստանալ ցորենի գնումներ կատարելու, բայց մինչև այժմ դեռ հաց չենք ստացել:

Մուշեղյան - Ես զարմանում եմ մի բանի վրա, թե ինչու՞ միայն այժմ է քննվում այս հարցը, ի՞նչ է փոխվել Ռուսաստանում և ինչու՞ այժմ է ուղարկվում այդ ներկայացուցչությունը: Չեմ հասկանում նաև, թե ի՞նչ է կատարվել մեր ներքին կյանքում, որ կենտրոնն անհրաժեշտ է համարում այդ հարցը հրատապ ձևով քննել: Երբ հարց է բարձրացվում մի որևէ երկիր ներկայացուցչություն ուղարկելու մասին, կառավարությունը սովորաբար մանրամասն տեղեկություններ է տալիս թե՛ այդ երկրի դրության և թե՛ երկու երկրների փոխհարաբերությունների մասին: Բայց այդ բանը մեր կառավարությունը անտես է առնում միշտ էլ: Եթե ամեն մի պատվիրակություն ուղարկելու առթիվ կառավարությունը որոշ բացատրություններ տար, մենք հնարավորություն կունենայինք կառավարության քաղաքականության ընդհանուր կուրսին տեղյակ լինելու: Այս խնդիրը չափազանց կարևոր է, որովհետև այսպիսով մենք քննության ենք դնում և որոշում մեր դիրքը դեպի զանազան քաղաքական կազմակերպություններ: Միանգամայն անհարմար է այսպիսի խոշոր խնդիր այսքան հրատապ ձևով և առանց մանրամասն քննության ընդունել:

Արտաքին գործոց մինիստր - Ես չկարողացա հասկանալ, թե ի՞նչ է ուզում ասել պատգամավոր Մուշեղյանը: Նա անհրաժե՞շտ է համարում կամավորական բանակի և Կուբանի կառավարության կից ունենալ դիվանագիտական ներկայացուցչություն, թե՞ ոչ: Ես չեմ ուզում բացատրել այդ ներկայացուցչության ապագա նպատակներն ու կատարելիք դերը: Այո՛, կարելի է քննության առնել այն խնդիրը, թե ինչու՞ մինչև այժմ չենք ուղարկել այդ ներկայացուցիչները: Ես պիտի ասեմ, որ մեղավոր եմ, պետք է առաջ ուղարկեինք, բայց այդ չենք արել: Հարկավոր է անպատճառ ներկայացուցչություն ունենալ այդ շրջաններում, քանի որ քաղաքականությունը փոխվում է, նոր ուժեր են առաջանում, որոնց ստիպված ենք հաշվի առնել: Հենց այդ պատճառով էլ հարկավոր է մեր պատվիրակությանը որոշ լիազորություններ տալ, քանի որ քաղաքական երերուն դրության պատճառով մշտական դիրեկտիվներով գործ չի կարելի անել: Օրինակ՝ այժմվա մշակած դիրեկտիվները վաղը կանպետքանան, որովհետև մենք չգիտենք, թե ի՞նչ է լինելու վաղը: Հնարավոր է, որ կամավորական բանակը հզորանա, ուրեմն և կարող է գրավել ամբողջ Ռուսաստանը: Մենք միշտ էլ կապ կպահենք մեր պատվիրակության հետ, որով դրսի աշխարհում եղած փոփոխություններին իրազեկ կլինենք: Եթե կապ ունենանք, մենք հարմարություն կունենանք նոր դիրեկտիվներ տալու:

Ազատյան - Արտաքին գործոց մինիստրի ասածից կարելի է եզրակացնել, որ աշխարհի բոլոր վայրերում հարկավոր է ունենալ պատվիրակություն՝ դրսի աշխարհում կատարվող փոփոխություններին իրազեկ լինելու համար: Անհրաժեշտ է դիրեկտիվները մշակել և ապա պատվիրակություն ուղարկել: Իսկ մինիստրը հակառակն է առաջարկում՝ ուղարկել պատվիրակություն և ապա դիրեկտիվներ տալ: Ինչու՞ պատվիրակություն չենք ուղարկում Բեռլինի բանվորության մոտ: Ուրեմն հարկավոր է ծանոթացնել պառլամենտին պատվիրակության նպատակների հետ և հետո ուղարկել: Առանց քննության ոչ մի պատվիրակություն չպիտի ուղարկել, քանի որ յուրաքանչյուր սխալ նպատակով ուղարկած պատվիրակություն կարող է կործանարար լինել մեր ժողովրդի ֆիզիկականի համար: Մենք այստեղ ինչ-որ գաղտնի հարաբերություններ ենք նկատում մեր կառավարության և Դենիկինի միջև: Հնարավոր է, որ գաղտնի մի պրուժինա լինի այդ երկուսի միջև: Մենք գիտենք, որ գաղտնիքներ կան, որ միայն կառավարությանն են հայտնի: Բայց գաղտնիքներ էլ կան, որ միայն զինվորական մինիստրը գիտե: Մեր ֆրակցիան անհրաժեշտ է համարում Հյուսիսային Կովկաս մարդ ուղարկել, որովհետև մեր ժողովուրդը քաղցած է: Բայց եթե քաղաքական նպատակով է ուղարկվում,

ապա պիտի պարզել մեր հարաբերությունները Ռուսաստանի մյուս մասերի հետ, հակառակ դեպքում անակնկալներ կարող են լինել: Մեր մինիստրությունը զանազան պատվիրակություններ ուղարկելով, մեծ պետության համապատասխան ծախսեր է կատարում: Այո, առաջարկը ցույց է տալիս, որ հացի խնդիրը մինիստրության համար այնքան էլ կանոր չէ: Մեր արտաքին գործերի մինիստրը քաղաքական ծրագիրներ է հետապնդում, մոռանալով, որ ժողովուրդը ճանճի պես կոտորվում է: Մեր ֆրակցիան առաջարկում է մերժել և վերացնել այս օրինագիծը, քանի որ մեզ համար պարզ չէ նպատակը, երկրորդ, որ փողը այսպիսով ջուրն ենք նետում, այնինչ մեր երկիրը փողի և հացի մեծ կարիք ունի:

Մինախորյան - Վերջերս սովը պատրվակ բռնելով, մի շարք առաջարկներ են արվում, որոնց քննությունը պարզում է, թե նրանք սովի հետ բոլորովին կապ չունեն: Սովի խնդիրը մի տեսակ միջոց է դառել զանազան առաջարկներ անցկացնելու համար: Այս առաջարկից երևում է, որ մեր ուղարկելիք պատվիրակությունը հացի խնդրից հետո ուրիշ ծրագիրներ էլ ունի իրագործելու, որ մեզ համար անհայտ է: Ինչպես արտաքին գործերի մինիստրը ասում է, մեր քաղաքական դրությունը երերուն է, հենց այժմ դիրեկտիվներ մշակել հարկավոր է: Մինիստրի ասածը կառավարության ընդհանուր կուրսն է, որ կարելի է ասել այսպես՝ մարդ ուղարկենք և մեր ժողովրդի բախտն ամբողջովին հանձնենք նրան: Այսպիսով, ուրեմն, մեր արտաքին քաղաքականությունը սուբյեկտիվ հողի վրա ենք դնում: Մեր պատվիրակը կարող է մի որևէ բան տենդենցիոզ ձևով հաղորդել, նայել քաղաքական անցուդարձին այլ ակնոցներով, և մեր կառավարությունն էլ պարտավոր է ղեկավարվել նրա ասածով: Բայց այսպիսի քաղաքականությունը կարող է մեր ժողովրդին մի օր անդունդը գլորել: մեզ օրինակ են բերում Ադրբեջանն ու Վրաստանը, բայց չէ՞ որ նոքա որոշ պատվիրակություն ուղարկելիս մշակել են դիրեկտիվներ: Վերջապես ովքե՞ր են այն անպատասխանատու պատվիրակսպաները, որոնք հայտարարում են, թե հայ զորքը ռուսականի մի մասն է, մեր երկիրը Ռուսաստանի անբաժան հողաշերտը: Գիտե՞ այս բոլորը մինիստրը և, եթե այո, ինչու՞ չի պատժում նրանց:

Վրացյան - Շատ ճիշտ է ասում Մինախորյանը, թե վերջին օրերս «սով» բառը շատ են հոլովում: Ես կբերեմ մեր նախորդ նիստերից մեկի որոշումը՝ Սուրմալու արտակարգ պատվիրակություն ուղարկելու հարցը: Բայց մինչև այժմ այդ պատվիրակությունը չի գնացել, որովհետև որոշ մարդիկ պարզապես չեն ցանկանում աշխատանք կատարել: Այս նոր պատվիրակություն ուղարկելու հարցը ևս կարևոր է: Բայց այստեղ մի խոշոր հանգամանք կա: Տնտեսական և ընդհանրապես պարենավորման յուրաքանչյուր խնդիր գերազանցապես քաղաքական բնույթ ունի շատ հասկանալի պատճառներով: Հաց բերելը այժմ քաղաքական հարց է, ուրեմն առևտրական ագենտներով ոչինչ չի կարելի անել: Պատգամավորներից ոմանք հայտնում են, թե պատվիրակության նպատակը պարզ չէ իրենց համար: Բայց հասկանալի պիտի լինի, որ եթե Հայաստանի կառավարությունը մի ուրիշ երկիր պատվիրակություն է ուղարկում, ապա այդ միայն երկրի շահերի պաշտպանությունն է: Իսկ թե ինչ խնդիրներ կհարուցանեն այնտեղ, դրա մասին հնարավոր չէ խոսել, որովհետև ներկա դերեկտիվը հետագայում անպետք է դառնալու: Ես ոչինչ դեմ չունեմ, եթե քննության առնվի կառավարության ընդհանուր քաղաքականությունը, բայց պիտի հայտնեմ շատերին, որ կառավարության քաղաքականությունը զանազան անձանց քմահաճույքից և տենդենցիոզ տվյալներից չի կախված, ինչպես ասացի այստեղ: Պատգամավորներից ոմանք առաջարկում են հատուկ քննության ենթարկել այս խնդիրը: Պիտի ասեմ, որ այդ այնքան էլ անհրաժեշտ չէ: Խնդիրը շատ պարզ է, ուրեմն ավելորդ է երկար վիճել դրա մասին:

Մուշեղյան - Սուրմալու ուղարկած կոմիսիան չի գնացել, որովհետև էսդեկները և ժողովրդականները մարդ չեն տվել: էսդեկները սկզբունքային առարկություն ունեին կոմիսիայի դեմ, ուրեմն և կարող էին կոմիսիային չմասնակցել: Այսպիսով խոսքը նրանց մասին է, որոնց հետ դուք կոալիցիա եք կազմել: Այստեղ մեզ առաջարկում են, թե կարելի է կառավարության ընդհանուր քաղաքակա-

նությունը քննադատել: Բայց ո՞րն է այդ քաղաքականությունը, արևելյան ֆեդերացիա՞ն, թե՞ Ամերիկա մարդ ուղարկելը, կամ գուցե Դենիկինն է մեր քաղաքականության գլխավոր կետը: Մենք մեր հարևանների հետ ունեցած վեճերը տալիս ենք անգլիացիներին և հեռավոր երկրներում քաղաքական նպատակներ հետապնդում: Ի՞նչ է մտածում կառավարությունը Ղարաբաղի մասին, չէ՞ որ այս հարցն ավելի կարևոր է, քան Ամերիկա մարդ ուղարկելը: Կառավարությունը գիտե՞, որ Կուբանի և կամավորական բանակի մեջ լուրջ տարաձայնություններ կան Ռուսաստանի նկատմամբ: Ուրեմն ինչպե՞ս կարելի է երկու ներկայացուցիչ ուղարկել, չէ՞ որ նրանք հակասական շահեր են հետապնդում: Ինչու՞ համար են ուղարկվում այն պոլկովնիկները, որոնք Դենիկինի մոտ ասում են, թե հայկական զորքը կամավորական բանակի մի մասն է կազմում: Վերջապես ի՞նչ երաշխիք ունենք, թե մեր ներկայացուցիչն այնտեղ պիտի հայ դեմոկրատիայի կամքն արտահայտի և ոչ զանազան: Ես նկատում եմ ինչ-որ գաղտնի հարաբերություններ և հայտարարում եմ, որ գաղտնի դիպլոմատիա երբեք չպետք է լինի: Մեր կառավարությունը ընդունու՞մ է անկախ Հայաստանի գաղափարը: Եվ եթե ոչ, ցանկանու՞մ է միանալ Ռուսաստանին և ի՞նչ ձևով: Սրանք կարևոր խնդիրներ են, որ պիտի պարզվի բոլորի համար: Վերջապես ու՞մ պիտի ուղարկենք (ձայներ կենտրոնից՝ Չե՛զ): Հայտնի՞ է կառավարությանը, որ մեր ներկայացուցիչները այնտեղ պրովոկացիա են անում մեր դեմ և ամենաստոր ձևով Ռուսաստանի շահերը պաշտպանում: Ես կրկնում եմ, որ պատվիրակություն ուղարկելուց առաջ այս բոլոր խնդիրները մանրակրկիտ լուսաբանության պիտի ենթարկվեն: Մեր ֆրակցիան առաջարկում է հետաձգել այս խնդրի քննությունը և տալ արտաքին գործերի կոմիսիային՝ ի քննություն, որովհետև մեր արտաքին քաղաքականության ամենաչնչին փոփոխությունը պիտի անդրադառնա մեր ժողովրդի բախտի վրա:

Ավդալբեկյան - Մեր ֆրակցիան Սուրմալուի կոմիսիային չի մասնակցել, բայց այդ կոմիսիան դրա համար չի ուշացել: Արդյոք նրանք մոռացե՞լ են, որ մենք հենց առաջին անգամ պնդում էինք, թե կոմիսիային արտակարգ լիազորություններ պիտի տալ: Պատճառը մենք չենք եղել, այլ նոքա, որոնք կոմիսիայի նպատակը աղավաղեցին:

Նախագահող - Խոսեցեք բուն նյութի մասին, պատգամավոր Ավդալբեգյան:

Ավդալբեկյան - Մենք սովի մասին շատ ենք խոսում, բայց մեր ունեցած վերջին կոպեկները աննպատակ ծախսում ենք: Մեր պետությունը, որ նախկին $2^1/_2$ գավառի սահմաններ է ընդգրկում, մեծ պետություններին վայել ծախսեր է կատարում՝ զանազան պատվիրակություններ ուղարկելով: Չի կարելի ամեն տեղ մարդ ուղարկել: Ամենից առաջ հարկավոր է իմանալ, թե ո՞վ է ճանաչում մեր անկախությունը: Արտաքին գործոց մինիստրի կամքից չի կախված դիվանագիտական ներկայացուցիչ ուղարկելու խնդիրը. հարկավոր է որ խորհուրդը վճռի նման կարևոր հարցեր: Խոսում են՝ Դենիկինի մոտ մարդ ունենա՞լ, թե ոչ և այդ որքա՞ն շահավետ և պատշաճ է մեզ: Կառավարությունը իբր թե մտահոգված է հացի գործերով. չէ՞ որ այժմ ճանապարհը բաց է. ինչու՞ չեն բերում Հյուսիսային Կովկասից ցորեն, չէ՞ որ մենք գումարներ ենք փոխադրել և ծախսեր կատարել: Մեր կառավարությունը պիտի ամեն կերպ իր դրամը խնայի և խուսափի ավելորդ ծախսեր կատարելուց: Մեր ֆրակցիան առաջարկում է օրինագիծը մերժել, քանի որ աստառը բարեգործական է. դարձյալ ուզում են որևէ մեկին մի լավություն արած լինել և դրա համար փող են պահանջում՝ պատրվակ պահելով մարդ ուղարկելու խնդիրը:

Ղազարյան - Ընկեր էսեռների համար պարզ չէ, թե Հայաստանի Հանրապետությունը անկախ է: Այս խնդիրը դնել, նշանակում է ջուր ծեծել: Ռուսաստանի հետ միանալու մասին խոսք անգամ լինել չի կարող: Դենիկինի մոտ պատգամավորություն ուղարկելու առթիվ նկատվեց, որ մենք շռայլ ծախսեր ենք անում: Բայց թե նայեք մեզ վիճակակից Վրաստանին: Նա 1½ միլիոն է հատկացրել Փարիզի կոնֆերանսի պատվիրակության: Ես գտնում եմ, որ արտաքին գործոց նախարարի նկատողությունը ճիշտ է, որ նա և մենք ուշացել ենք Դենիկինի և

Կուբանի մոտ ներկայացուցիչներ ունենալու խնդրում: Եվ երբ այսօր դրվում է այս հարցը, դուք դարձյալ ձգձգում եք՝ ինչ-որ մտավախության հարց բարձրացնելով:

Զուբյան - Մի հարց եմ տալիս Ղազարյանին: - Ընդունում եմ, որ մենք անկախ ենք: Այդ դեպքում ինչպես հաշտեցնեմ դրա հետ այն հանգամանքները, որ Դենիկինի ներկայացուցիչը ծառայում է մեր զորքերի մեջ և որ Դենիկինը մեր զորքերը համարում է իր VII դիվիզիան:

Արտաքին գործոց մինիստր - Ես կաշխատեմ պատասխանել առարկությանց լուրջ կետերին: Ես ասացի, որ պիտի ներկայացուցիչ ուղարկվի Դենիկինի և Կուբանի մոտ: Դրա դեմ առարկություններ փնտրենք: Ասում եք, թե դրանով որոշ մարդկանց բարեգործություն ենք ուզում անել՝ պաշտոն ստեղծելով նրանց համար: Դա լրջության նշույլ չունի իր մեջ: Առարկության մի կետ կա, որ Դենիկինի մոտ չպիտի ուղարկել ներկայացուցիչ, քանի որ նա պետություն չէ, ինչպես ասում է աջը,* բայց հայտնի է, որ նա սոսկ բանակ էլ չէ, այլ և՝ պետություն, և՝ քաղաքական մի ուժ: Ասում են, թե Դենիկինը չի ընդունում մեր անկախությունը: Բայց հենց մեր անկախությունը ապացուցելու համար նրա մոտ պիտի ներկայացուցիչ ունենանք: Ես գիտեմ, որ Դենիկինի ներկայացուցիչը այն կարծիքին է, որ մենք անկախ պետություն ենք: Թերևս սկզբում նա այս հայացքը չունենար, բայց հետագայում համոզվեց դրանում:

Ապա հիշվեց, թե ինչպես շռայլում ենք մեծ գումարներ: Նախ և առաջ պիտի ի նկատի ունենալ մեր բոների արժեքը: Նման առարկությունները հռետորության համար կարող են պետք գալ, բայց զուրկ են իրական արժեքից: Ապա պիտի ի նկատի ունենալ, որ մեր հարևանները իրենց պառլամենտների թույլտվությամբ ավելի են ծախսում, քան մենք:

Ասում են, թե Կուբան պիտի ուղարկվի վաճառականական հմտություն ունեցող անձն և ոչ թե քաղաքագետ: Ճիշտ է, որ հացի գնումը և նման բաներ փորձված վաճառականի գործ են: Բայց այս գործը վաղուց կատարված կլիներ, եթե հարցը առևտրական լիներ: Բայց խնդիրը կրում է քաղաքական բնույթ: Դրա համար է, որ պիտի դիմենք Դենիկինին, և Կուբանին՝ քաղաքական ներկայացուցիչների միջոցով: Սովի մեջ գտնվող ժողովրդի համար հացի գնումն էլ քաղաքական մի ակտ է:

Հովհ. Ստեփանյան - Օպոզիցիան խիստ է խոսում: Պիտի ի նկատի ունենալ, որ նույն օպոզիցիայի ընկերները Վրաստանում այլ գործեր են կատարում: Ամեն տեղ նրանք ներկայացուցիչներ ունեն: Այս խնդրում մենք թույլ ենք գտնվել: Կուբանում և Դենիկինի մոտ մեր ներկայացուցիչները պիտի լինեն մեր անկախությունը պաշտպանելու համար: Նմանապես մենք չենք կարող հանդուրժել, որ ազատ պետությունների ներկայացուցիչները այստեղ փորեն մեր անկախության հիմքերը:

Նախագահող - Վիճաբանությունները սպառված են: Սոցիալ-դեմոկրատները ներկայացրել [են] հետևյալ բանաձևը.

«Լսելով Կուբանի կառավարության և Դենիկինի մոտ դիպլոմատիական ներկայացուցչություն հաստատելու վերաբերյալ օրինագիծը, Հայաստանի Խորհուրդը մերժում է այն, առաջարկելով կառավարությանը անհապաղ Հյուսիսային Կովկաս ուղարկել առևտրական ագենտներ՝ երկրին հնարավորապես շուտ հաց հասցնելու համար»:

- Ո՞վ է համաձայն այս բանաձևին: 7 ձայն, չի անցնում:

Դնում եմ օրինագծի հոդվածային ընթերցման անցնելու հարցը: Ո՞վ է համաձայն: Անցնում է:

Օրինագծի մեջ ներկայացված է միմիայն մի ներկայացուցչի հարցը: Խորհրդարանում խոսք եղավ երկու ներկայացուցիչների մասին: Ո՞վ է համաձայն, որ սա նայվի որպես Կուբանի ներկայացուցչի օրինագիծ, իսկ Դենիկինի համար հետո ներկայացվի:

* Նկատի ունի պառլամենտի աջակողմյան ուժերին: Ծանոթ. կազմ.:

- Անցնում է: Անցնում ենք հոդվածային ընթերցման:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Կարդում է 1 հոդվածը.

Օրինագիծ-նախահաշիվ
Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի՝ Կամավորական զորաբանակում և Կուբանում.

Հաստատել 1919 ամի փետրվարի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչություն՝ Կամավորական զորաբանակի և Կուբանի կառավարության մոտ հետևյալ նախահաշվով:

Անցնում է:

Ս. Տեր-Մարտիրոսյան - (Զեկուցում) «Ֆինանսական հանձնաժողովը փետրվարի 10-ին քննելով ներկա օրինագիծը, ֆինանսական մասը հարմար գտավ փոփոխել այն ձևով, որ արված է Ադրբեջանի ներկայացուցչության վերաբերմամբ այն է՝ շտատը կազմել հետևյալ ձևով, հաշված 30% հավելումները.-Ա. ներկայացուցչին՝ 1690 ռ., մի քարտուղար և առանձին հանձնարարությունների պաշտոնյա՝ 1040 ռ., մի գործավար՝ 8000 ռ., մի մեքենայի վրա աշխատող՝ 500 ռ. և երկու ծառայողներ՝ 500-ական ռուբլի, բոլորին ամսական 5030 ռ.: Բնակարանի, վառելիքի և լուսավորության՝ 1000 ռուբ., դիվանական ծախք ու թարգմանություն՝ 500 ռ., չնախատեսված ծախքեր՝ 500 ռ.-այսպիսով, ամսական 2530 ռուբլի, իսկ 11 ամսական՝ 93830 ռուբլի և միանվագ, բնակարանի կահավորման՝ 1000 ռուբլի, բոլորը՝ ինսունչորս հազար ութ հարյուր երեսուն (94830) ռուբլի և այն առաջարկել խորհրդարանի հաստատության՝ քաղաքական մասը թողնելով նախագահությանը ընթացք տալու»:

Խորհուրդը նախահաշիվն ընդունում է ֆինանսական հանձնաժողովի ձևակերպումով:

Աղբալյան - Շտապողականություն չի հայտնված. II ընթերցումը հետո կլինի:

Նախագահող - Ո՞վ է համաձայն: Անցնում է:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Կարդում է 10 միլիոն ռուբլու նոր արժեթղթեր բաց թողնելու օրինագիծը.

Օրինագիծ
5 տոկոսաբեր կարճ ժամանակյա պետական գանձարանի 10 միլիոնի պարտավորագրեր բաց թողնելու մասին.

Մինիստրների խորհուրդը լսելով ֆինանսների մինիստրի զեկուցումը դրամական նշանների շրջանառության դժվարությունների մասին, որ առաջ է գալիս այդ նշանների պակասությունից և որ զորեղապես ազդում է երկրի տնտեսական վիճակի վրա առհասարակ, և առաջարկությունը 10 միլիոնի 5 տոկոսաբեր գանձարանային եռամսյա և վեցամսյա պարտավորագրեր բաց թողնելու մասին, որոշեց հավանություն տալ նրա առաջարկին և Հայաստանի Խորհրդին ներկայացնել հետևյալ օրինագիծը.

1. Գանձարանի միջոցները զորացնելու համար բաց են թողնվում պետական գանձարանի 10 միլիոն ռուբլու կարճ ժամանակյա 5 տոկոսաբեր պարտավորագրեր:
2. Այդ պարտավորագրերն ապահովվում են հանրապետության ամբողջ ստացվածքով:
3. Պարտավորագրերի %-ներն ազատ են լինելու պետական տուրքից:
4. Նոքա բաց են թողնվում առ պահանջողն՝ յուրաքանչյուր 500 և 1000 ռ. արժեքով և 3 ու 6 ամիս ժամանակով:
5. Պարտավորագրերը ծախվում են նոմինալ արժեքով՝ տոկոսների զեղչմամբ, այսինքն՝ նոցա տոկոսները վճարվում են գնողին առաջուց, զեղչելով այդ տոկոսները պարտավորագրի արժեքից՝ սկսած գնման նրա օրից մինչև ժամանակը լրանալու օրը:

6. Պարտավորագրերը պետական բանկից դուրս տալու ժամանակ ստացողի ցանկության դեպքում կարող են, համապատասխան մակագրությամբ, վերածվել և անվանականի:

7. Պարտավորագրերի ժամանակը լրանալիս նրանց ունեցողներին իրավունք է տրվում իրենց պատկանող պարտավորագրերով ստանալ կանխիկ դրամ, կամ թե ժամանակն անցածները փոխել հետագա տևողության պարտավորագրերով:

8. Պարտավորագրերն ընդունվում են նոմինալ արժեքով, իբր գրավական պետական կապալի և մատակարարման պայմաններ կնքելիս, ինչպես և ակցիզային վճարումների հետաձգումն ապահովելու համար, իսկ հարկերի, տուրքերի և արքունի այլ վճարումների համար նոքա ընդունվում են տոկոսների զեղչմամբ:

9. Ֆինանսների մինիստրին վերապահվում է իրավունք այդ պարտավորագրերը բաց թողնելու ամեն ժամանակ, ըստ իր հայեցողության, առանց առ այդ առանձին թույլտվություն խնդրելու, այն պայմանով, որ բաց թողնված բոլոր պարտավորագրերի գումարը 10 միլիոն ռուբլուց չանցնի:

Ֆինանսական հանձնաժողովը միաձայն ընդունել է այս օրինագիծը և այժմ առաջարկում է խորհրդին՝ ի քննություն:

Կ. Գյուլնազարյան - Նոր արժեթղթեր բաց թողնելու միտքը հղացավ այն ժամանակ, երբ հայ-վրացական պատերազմն էր և երբ երկրում ֆինանսական ճգնաժամ էր: Այդ օրինագիծը նախարարության կողմից վաղուց է ուղարկված, բայց ֆինանսական կոմիսիան դանդաղել է քննել: Ներկա քաղաքական դրությունը այլ է, փոխվել է և մեր ֆինանսական վիճակը: Հեռագրական լուրերի համաձայն ֆինանսների պարոն մինիստրը Թիֆլիսում նոր փոխառություն է կնքել, մոտ 160 միլիոն ռուբլու: Այս նոր՝ 10 միլիոն ռուբլու փոխառության խնդիրը առաջարկում եմ չքննել, այլ սպասել մինչև կգա ֆինանսների պարոն մինիստրը: Բացի այդ, մեր երկրում այնքան էլ հարմարություններ չկան փոխառության բարդ գործի համար: Օրինակ՝ որտե՞ղ կարող ենք տպել արժեթղթերը: Ամենից հարմարն է հետաձգել մինչև ֆինանսների մինիստրի գալը:

Պ. Զաքարյան - Ես ևս դեմ եմ այդ օրինագծի քննությանը: Երբ որ խորհուրդը բամբակի գնման գործն էր քննում, ֆինանսների մինիստրի պարոն պաշտոնակատարն ասաց, որ մենք այդպիսով մեզ համար մնայուն արժեք ենք ստեղծում: Եթե պետությունը միջոցներ ունի մնայուն արժեքներ ստեղծելու, ապա էլ ինչու՞ զուր տեղը փոխառություն կնքենք և տոկոս վճարենք և այդ էլ այն ժամանակ, երբ դրսում՝ Թիֆլիսում, նոր պայմանագիր է կնքված: Մի շարք տեխնիկական անհարմարություններ ստիպում են ինձ նույնն ասելու: Ես առաջարկում եմ մերժել և վերադարձնել օրինագիծը:

Բուդաղյան - Մեր ֆրակցիան առաջարկում է այսօր չքննել այդ օրինագիծը, որովհետև ոչ ֆինանսների մինիստրը կա և ոչ էլ նրա պաշտոնակատարը:

Քվեարկությամբ որոշվում է չքննել օրինագիծը, մինչև կգա ֆինանսների պարոն մինիստրը: Այս բանաձևը ստանում է ձայների մեծամասնությունը:

Նախագահող - Մյուս հարցերն են. հայ ժողովրդական կուսակցության ֆրակցիայի հարցումները ներքին, զինվորական և արտաքին գործոց մինիստրներին: Պարոնայք մինիստրները կցանկանային պատասխանել:

Արտաքին գործոց մինիստր - Հայ ժող. կուսակցության ֆրակցիայի հարցումը, ուղղված արտաքին և զինվորական մինիստրներին, վերաբերում է կամավորական բանակի ներկայացուցիչ Լեսլինին: Ժողովրդականները շեշտում են իրենց հարցման մեջ, թե ինչու այդ նույն Լեսլինը ռոճիկ է ստանում մեր զինվորական մինիստրությունից և միևնույն ժամանակ բացարձակ ագիտացիա է մղում Հայաստանի Հանրապետության դեմ: Պիտի ասեմ, որ հարցման մեջ որոշակի ոչինչ չի ասված, ինչպես և փաստ չկա, որ հիմք ծառայի: Ես միայն մի դեպք գիտեմ, որի մասին գրավոր դիմել եմ Լեսլինին և բացատրություն պահանջել: Այդ վերաբերում է Կարսին. լուրերի համաձայն Լեսլին Կարսում անգլիացիներին առաջարկել է հրավիրել մի ռուս նահանգապետ, ընդհանրապես նա այն միտքն է հայտնել, թե լավ կլիներ այդ շրջանը միացնել, թեկուզ՝ ժամանակավորապես, ռուս կառավարությանը: Իմ գրավոր հարցումին նա պատասխանեց, որ ինքը ոչ մի պաշտոնական խոսակցություն չի ունեցել Կարսի անգլիական նահանգապետի հետ. նա միայն ասել է, թե լավ կլիներ, եթե մի ռուս նահանգապետ լիներ Կարսի շրջանում, որը կարող կլիներ զսպելու հայ - թուրքական լարված հարաբերությունները: Այդ նահանգապետը, համաձայն նրա առաջարկի, պիտի ենթարկվի Հայաստանի կառավարությանը: Ես նրա արածների մեջ դիտավորյալ ոչինչ չեմ գտնում և հայտնում եմ, որ նա դեպի հայ ժողովուրդը որևէ չարակամություն չունի:

Զուբյան - Ես միայն մի կետի մասին կհարցնեմ. ինչու՞ է կամենում Լեսլին, որ Կարսի նահանգապետը ռուս լինի: Հայ-մուսուլմանական հարաբերությունները պատճառ չեն կարող լինել դրան: Ես չեմ ուզում ասել, թե Լեսլին մեր հանրապետության դեմ ագիտացիա է մղել, այլ ցանկանում եմ պարզել, թե ի՞նչ է հասկանում ռուս նահանգապետ տերմինի տակ:

Արտ. գործ. մինիստր - Նա բանավոր խոսակցության ժամանակ հայտնեց, որ ինքը որևէ նպատակ չունի:

Զուբյան - Բանավոր խոսակցությունը այնքան էլ կանոր չէ: Նրա ուղարկած գրությունը, որ փաստաթուղթ է, մութ և կասկածելի կետերից է կազմված:

Արտ. գործ. մինիստր - Գուցե Լեսլին Կարսի նահանգի նկատմամբ որևէ քաղաքական ծրագիր ունի, բայց այդ մեզ համար փաստ չի կարող լինել, որ մեր դիվանագիտական հարաբերությունները խզվեն: Կամավորական բանակի ներկայացուցիչը կարող է որոշ հայեցակետ ունենալ որևէ խնդրի նկատմամբ: Իսկ մենք միայն կարող ենք հետաքրքրվել, թե արդյոք նա Հայաստանի կառավարության դեմ որևէ ագիտացիա մղե՞լ է, թե ոչ, և որոշ փաստեր հավաքելուց հետո կարող ենք մտածել մեր դիրքի մասին: Իմ գիտցածով, ոչ մի վտանգավոր բան չի եղել, գոնե այդ է ասում փաստերի չլինելը:

Բաբալյան - Ուզում եմ մի քանի հարց տալ.-1. Ի՞նչ պաշտոն ունի Լեսլինը: 2. Ո՞վ է ուղարկել նրան Կարս. ինչու՞ է գնացել ինքնագլուխ, իր կառավարությունից հրաման ուշ՞ն, թե ոչ:

Փաստերի մասին է առարկում պարոն մինիստրը. ես նրան կհիշեցնեմ էջմիածնի փաստը, որ այդ նույն Լեսլին էջմիածնում կաթողիկոսի և անգլիացիների մոտ ասել է, թե հայերը Ղամարլուի շրջանում թուրքական գյուղեր են ոչնչացրել: Ինչպե՞ս է բերվել 15 մեշոկ ալյուր Կարսից, որ իբր թե թուրքերն են ընծայել նրան: Մեր բարեկամ կամավորական բանակի ներկայացուցիչը երբեք այդպիսի բան չի արել, ասում է մինիստրը, հապա ի՞նչ է ցույց տալիս նրա արածը Ալեքսանդրապոլում, որտեղ նա ծառայողներին հայտնել է, թե շուտով կոզակներ են գալու Կովկաս: Բացի այդ, նա գրգռել է ռուս և հայ ծառայողներին գործադուլ անել: Ի՞նչ իրավունքով է նա Ալեքսանդրապոլում ումն Գրավչենկոյի ներկայացուցիչ նշանակել կամավորական բանակի կողմից, առանց Հայաստանի կառավարության գիտության: Սոքա բավական պերճախոս փաստեր են, և արտաքին գործոց մինիստրը չպիտի անտես առնի այս բոլորը: Պետք է հոգալ այդպիսի տարրերի հեռացման մասին, որովհետև նրանք մեր դեմ ագիտացիա են անում:

Զաքարյան - Ես ուզում եմ իմանալ, ո՞վ է Լեսլինը, կամավորական բանակի ներկայացուցիչը՞, թե՞ հայ զորամասում ծառայող մի մարդ: Ո՞ր իրավունքով այս երկու պաշտոնները միացվել են և ինչու՞ Լեսլինին մեր զինվորական մինիստրությունից ամսական 1000 ռ. ռոճիկ է վճարվում:

Եր. Հարությունյան - Մի քանի հարց էլ ես եմ ուզում տալ:

- Ինչու՞ է Լեսլինը գնացել Կարս և պղտորել մեր և անգլիացիների հարաբերությունները: Ճի՞շտ է, որ նա կաթողիկոսի մոտ վատ է արտահայտվել մեր կառավարության մասին: Մենք կարող ենք փաստերով ապացուցել, որ այո, նա վնասակար քայլեր է անում: Նոքա մտածում են հին ռեժիմի վերականգնման մասին: Մենք Լեսլինի գործերը քննադատելով, բնավ չենք փորձում պարսավել կամավորական բանակի քաղաքականությունը: Եթե հաստատվի, որ կամավորական բանակը նման քաղաքականություն ունի, ապա իսկույն պիտի հեռացնել նրա ներկայացուցիչներին: Մեր ֆրակցիան ոչ մի կերպ հնար չի գտնում արդա-

բացնելու Լեսլինին, քանի որ բոլոր վկայություններից հետևում է, թե իրոք նրա գործունեությունը վնասակար է:

Արտաքին գործերի մինիստր - 15 մեշոկ ալյուր ստանալու փաստը մի քիչ անհիմն է: Հարկավոր է ապացուցել, որ նա այդ ալյուրը ստացել է Հայաստանի կառավարության դեմ ագիտացիա մղելու համար:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Բայց այդ բանը տեղի է ունեցել:

Արտ. գործ. մինիստր - Շատ բարի, բայց նրա գործունեության մեջ որևէ տենդենցիոզ բան չկա և չի կարելի դրանով մեղադրել: Էջմիածնի փաստն անտեղի է և անհարմար: Մենք չենք կարող համակրել նրա ասածներին, բայց այդ նորից փաստ չի կարող լինել, թե նա մեր դեմ ագիտացիա է մղում:

Գրավչենկոյի մասին մենք ոչինչ չգիտենք և նրան չենք կարող ճանաչել որպես կամավորական բանակի ներկայացուցիչ Ալեքսանդրապոլում: Եթե Լեսլին հակակառավարական որևէ բան կատարի, բնական է, որ նա պատասխանատվության կկանչվի: Ալեքսանդրապոլում երկաթուղային ծառայողների մեջ կատարած նրա ագիտացիայի մասին ինձ ոչինչ հայտնի չէ: Ոչ ոք փաստեր չի հիշատակում, իսկ անհիմն լուրերի վրա հիմնվելով, կառավարությունը չի կարող որևէ բան ասել Լեսլինին: Ինչ վերաբերում է նրա Կարս գնալուն, ես պիտի ասեմ, որ այդ բանը եղել է առանց մեր գիտության և թույլտվության: Մեր իրավունքները Կարսի շրջանի նկատմամբ այնքան էլ որոշ չեն, և կառավարությունը չգիտե, կարելի՞ է արգելել Լեսլինին, թե՞ այդ կախված է անգլիացիներից: Ընդհանրապես այս խնդիրը չափազանց անորոշ է ու լուրերի վրա չի կարելի հիմնվել և պահանջել, որ կառավարությունը հեռացնի Լեսլինին:

Զուբյան - Ես համաձայն չեմ արտաքին գործոց մինիստրի առարկություններին: Երբ որ մենք Լեսլինի գործերն ենք քննում, մենք ուզում ենք պարզել, թե նա կառավարության և ժողովրդի դեմ ոչինչ չի՞ արել: Մենք ուզում ենք ասել, որ Լեսլինն իր գործողություններով քամահրում է մեզ և մեր երկրում ինքնագլուխ գործեր կատարում: Եթե նա մեզնից գաղտնի ոչինչ չի արել, ապա ո՞վ է թույլ տվել նրան առանց մեր գիտության Երևանից հեռանալ և մի այլ տեղ գնալ:

Բաբայան - Մի հարց ևս. գնդապետ Լեսլինը որևէ վկայական ու՞նի Դենիկինի կամ կամավորական բանակի շտաբի կողմից և եթե ունի, այդ վկայականի մեջ ասվա՞ծ է, որ նա քաղաքական հարցերի համար ուղարկվում է Հայաստանի կառավարության մոտ:

Զինվորական մինիստր - Ես ուզում եմ պարզել Լեսլինի մեր բանակում ծառայելու խնդիրը: Երբ որ գնդապետ Լեսլինը եկավ ինձ ներկայացավ, հայտնեց, որ ուզում է կապ պահել մեր կառավարության և Դենիկինի զորամասի միջև և որպես այդպիսին նա ցանկանում է ծառայել մեր զորաբանակում: Համաձայն կառավարության վճռին, ես նրան իմ տրամադրության տակ առա՝ նշանակելով համապատասխան ռոճիկ: Իսկ երբ նա ասաց, որ ինքը մեր բանակի կողմից ուղարկված է քաղաքական հարցերի համար բանակցելու Հայաստանի կառավարության հետ, նա հեռացվեց պաշտոնից:

Զուբյան - Լեսլինը որևէ նամակ կամ վկայական ունե՞ր՝ թե ով է նա, ներկայացուցի՞չ է, թե եկել է ծառայելու մեզ մոտ:

Զինվորական մինիստր - Այդպիսի վկայական նա արտաքին գործոց մինիստրին է ցույց տվել, իսկ ես միայն նրան փողով եմ բավարարել, համաձայն զինվորական օրենքի:

Զուբյան - Որ թվի՞ց է գրված վկայականը:

Արտաքին գործոց մինիստր - Նրա թուղթը տրված է նոյեմբերի 8-ին:

Զուբյան - Ե՞րբ է գնացել:

Արտաքին գործոց մինիստր - 1919թ. հունվարի 9-ին. իսկ իմ հարցումը եղել է հունվարի 1-ին:

Զուբյան - Ուրեմն նրա վկայականից երևում է, որ նա կես ներկայացուցիչ է: Ապա ինչպե՞ս է մտել մեր բանակը ծառայելու համար և ո՞վ է ընդունել նրան այդ պաշտոնում:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Պարզվում է, որ գնդապետ Լեսլինը Կարսում եղած ժամանակ մեր զորամասի ծառայության մեջ է եղել: Ուրիշ խոսքով նա командировка* է ուղարկված: Հետո կուզեի իմանալ, զինվորական մինիստրը ո՞ր փողերից է ռոճիկ տալիս նրան:

Զինվորական մինիստր - Կարս գնալուց հետո պարզվեց, որ Լեսլինը չի կարող ծառայել մեզ մոտ, ուստի և հեռացվեց: Նրան ռոճիկ տրվել է ընդհանուր գումարից, որպես բանակում ծառայող սպայի:

Զուբյան - Զինվորական մինիստրը նրան ռոճիկ տալիս ինչպե՞ս էր միացնում երկու պաշտոնը՝ ներկայացուցիչ և սպա:

Զինվորական մինիստր - Ես ընդունում եմ, որ այդ սխալ է եղել: Բայց չէ՞ որ նա ուղարկված էր կապ պահելու համար:

Մուշեղյան - Մեր ֆրակցիան տեղեկություն է ստացել, որ Ղարաքիլիսայի ռուսական գյուղերում մոբիլիզացիա է կատարվում: Չէ՞ որ Ղարաքիլիսան մերն է, ապա ի՞նչ իրավունքով մեր պետության սահմաններում ապրող ժողովրդին զինակոչ են անում մի այլ պետության կարիքների համար: Ի՞նչ կարող է ասել զինվորական մինիստրը այդ խնդրի նկատմամբ, որևէ կապ կա՞ Թիֆլիսի կամավորական բանակի շտաբի և Լեսլինի գործողությունների միջև: Իրավաբանական տեսակետից այս դրությունն անհանդուրժելի է, մանավանդ որ խնդիրը մեր անկախությանն է վերաբերում:

Զինվորական մինիստր - Ղարաքիլիսայի շրջանում ռուսների մոբիլիզացիայի մասին դիմեցինք գնդապետ Լեսլինին, բայց նա դրական պատասխան չկարողացավ տալ: Այս մասին ես զեկուց[եց]ի կառավարության, որը հայտնեց, թե ռուսների մոբիլիզացիային ինքը դեմ չի գնում:

Զորին - Ահա երեսուն տարի է, որ ես Կովկասումն եմ: Սակայն նկատում եմ, որ ռուսը ինչ էլ անի, կասկածվում է հայերի կամ թուրքերի կողմից որպես պրովակատոր: Նույնը տեղի է ունենում նաև գնդապետ Լեսլիի հետ: Իրոք այստեղ պրովակատորության կամ աչառության ոչինչ չկա, ինչպես մի քանի հարցերի մասին ճիշտ կերպով նկատեց արտաքին գործոց մինիստրը:

Զուբյան - Ըստ միջազգային օրենքի կարելի՞ է, որ մի պետություն մի ուրիշ պետության հպատակներին զինակոչի ենթարկի, ինչպես այս պատահում է մոլոկանների հետ:

Արտ. գործ. մինիստր - Զինակոչ չի արվում, այլ կամավորներ են հավաքում, այն էլ ոչ թե մեր կամ մեր հարևանների դեմ, այլ՝ բոլշևիկների: Այս կամավոր հավաքելը տեղի է ունեցել մեր գիտությամբ:

Զորին - Երբ մեզ առաջարկեցին մասնակցել պառլամենտին, մենք հայտարարեցինք, որ մինչև դրության պարզվելը ռուսահպատակ կմնանք: Եվ այս պայմանով էլ մենք մտել ենք պառլամենտ:

Ե. Հարությունյան - Ճի՞շտ է, որ սպաներ կան, որոնք չեն ցանկանում աստիճանի բարձրացում, չճանաչելով մեր կառավարությանը:

Զինվորական մինիստր - Ես զարմանում եմ, թե ինչպես բամբասանքները դառնում են պառլամենտի զբաղմունքի նյութ:

Ներքին գործոց մինիստր - Երկու ամիս առաջ ժողովրդական ֆրակցիան մտցրել է մի հարցապնդում Երևանի քաղաքային ընտրությունների ժամանակ տեղի ունեցած անկարգությունների մասին: Դրա պատասխանն ուշացել է ինձնից անկախ պատճառներով: Սկզբում պաշտոնակատար լինելով, չէի ուզում պատասխանել՝ թողնելով այդ հանգուցյալ նախարարին*: Ապա հետաքրքրվելով այս հարցով, ես մինիստրության մեջ այս առթիվ ոչ մի գործ չգտա: Ըստ օրենքի, եթե անկարգություն լիներ ընտրությունների ժամանակ, պիտի պատշաճ արձանագրություն կազմվեր, մի բան, որ չի եղել: Այնպես որ պատասխանի համար ոչ մի

* Գործուղում:-Ծանոթ.կազմ.:

* Խոսքը Արամ Մանուկյանին է վերաբերում:-Ծանոթ. կազմ.:

պաշտոնական աղբյուր չունեմ: Ճիշտ է, եղել են գանգատներ, սակայն հետ են վերցվել, և ընտրություններն էլ հաստատվել են:

Իհարկե, դրանով չեմ ուզում ասել, որ ընտրությունների ժամանակ անկարգություն չի եղել: Ինձ հայտնի է, որ հասարակական կարգը խանգարող բազմաթիվ մարդիկ կան և զարմանալի չէր լինի, եթե նրանք դեկտեմբերի 15-ին էլ անկարգություն անեին: Օգտվելով առիթից, ես մի քանի խոսք կասեմ դրանց դեմ մինիստրության կողմից եղած մտադրությունների մասին:

Նախ և առաջ պիտի հայտնեմ, որ այս անիշխանության վերջ տալը նախարարության կողմից մեծ ջանքեր է պահանջում: Դրանց վերացնելու երկու ճանապարհ կա: Նախ և առաջ պիտի մտցնել այնպիսի դրություն, որ հասարակությունը ինքնագործունեություն ցույց տա, ապա հանցավորների դեմ պիտի խիստ միջոցներ գործադրվեն:

Այս ուղղությամբ ես մտցրել եմ երկու օրինագիծ: Առաջինը զեմստվո և քաղաքային ինքնավարություններ մտցնելու մասին է: Դրանով հնարավոր կլինի ժողովրդի ինքնագործունեությունը և նրա հսկումը բյուրոկրատիայի վրա: Մյուս նախագիծը զինվորական շրջան հաստատելու մասին է, որի մեջ պիտի մտնեն էջմիածնի գավառը, Սուրմալուն, Դարալագյազը, Երևանի գավառը: Այս շրջանի իշխանությունը կհանձնվի մի գեներալ-նահանգապետի, որը կկանոնավորի զորամասերը, ընտիր պաշտոնեություն կկազմի, խիստ կերպով կհետևի հանցավորներին: Ինձ թվում է, որ այս երկու միջոցներով հնարավոր կլինի հասարակական կարգը վերականգնել: Պիտի ի նկատի ունենալ, որ ներկա անկարգությունները ժամանակավոր բնույթ են կրում և անցողական են: Դրանք գլխավորապես պայմանավորվում են սովով: Բնակչության մի մասը հանգիստ կերպով մեռնում է, իսկ մյուս՝ ավելի անհանգիստ մասը անկարգություն է անում: Վերջինս խոշոր չափերի է հասնում բնականաբար գաղթականների մոտ: Օրինակ՝ Բասարգեչարում գաղթականությունը հարձակվել է մի թուրք գյուղի վրա: Կարգադրել եմ դրանց դեմ մի թնդանոթ և էսկադրոն ուղարկել: Դավալուի շրջանում 10.000 գաղթականությունը սովամահ չլինելու համար կազմակերպել է սասունցիների մի խումբ 900 զինված մարդկանցով և անկարգություններ է անում: Հրահանգել եմ ցրել դրանց և տեղափոխել Դարալագյազ:

Գլխավորապես սովով է պայմանավորվում նաև զինվորների անկարգությունը: Այստեղ ամենից առաջ պիտի հիշել զանազան խմբերին: Ես հրահանգել եմ դրանց ցրել, որի համար Սուրմալու է ուղարկված մի սպա: Ապա՝ զորքը բավարար սնունդ չի ստանում և դրա համար էլ ստիպված է անկարգություններ անել: Իհարկե, ամեն միջոցներով պիտի աշխատել դրանց առաջն առնել խիստ օրենքներով և այլ միջոցներով, մինչև նորմալ դրության վերականգնումը: Ինձ թվում է, որ դրա համար բավարար ծառայություն կարող են մատուցել իմ հիշած երկու միջոցները՝ զեմստվոն և քաղաքային ինքնավարությունների ներմուծումը և անկարգ շրջաններից մի զինվորական շրջան կազմելը:

Իհարկե, տիրող անկարգության մեջ խոշոր մեղք ունի նաև ադմինիստրացիան՝ նրա մեջ գաղափարական տարբերի բացակայության շնորհիվ: Բայց թե կառավարությունը ստիպված է նրան պահել, որովհետև առհասարակ մեր մեջ այլ ավելի բարեխիղճ պաշտոնեություն հնարավոր չի լինում ճարել: Վերջին ժամանակները դրսից սկսվել է ընդունակ պաշտոնեության ներգաղթը: Մինիստրությունը կաշխատի դրանցով թարմացնել մեր ադմինիստրացիան:

Ե. Հարությունյան - Մեր հարցապնդումով հենց ցանկանում էինք կառավարության ուշադրությունը դարձնել երկրում տիրող անարխիայի վրա: Մենք մեր նպատակին հասանք և լսեցինք այս մասին նախարարի զեկուցումը, որով լիակատարապես բավարարված ենք:

Աղբալյան - Խմբագրական հանձնաժողովը ունի զեկուցելու հետևյալ օրինագծերի խմբագրությունը.

Օրենք
Ֆելդշերների, գթության քույրերի և եղբայրների դասընթացների մասին

Հոդ. 1. Հանձնարարվում է խնամատարության մինիստրությանը Երևանում և Ալեքսանդրապոլում բանալ դասընթացներ մինչև 300 ֆելդշերների, գթության քույրերի և եղբայրների համար:

Հոդ. 2. Դասընթացներին հետևողները պետությունից ստանալու են ամսական 300 ռուբլի նպաստ:

Հոդ. 3. Դասընթացներին հետևել կարող են երկու սեռի անձինք, 17 տարեկանից սկսած և ոչ պակաս, քան չորս դասարանի կրթությամբ:

Հոդ. 4. Դասընթացներին հետևողները ավարտելուց հետո պարտավոր են հարկ եղած դեպքում կառավարության պահանջով ծառայել պետական կամ հասարակական հիմնարկությունների մեջ առնվազն չորս ամիս՝ ստանալով սահմանված ռոճիկը:

Հոդ. 5. Նախընթաց հոդվածում հիշված պարտականությունից խուսափողները դատաստանական կարգով կենթարկվեն բանտարկության 1-3 ամիս:

Առժամյա օրենք
Հայ բանակի հաշմանդամ զորականներին նպաստ տալու մասին (մինչև կենսաթոշակի վերաբերյալ ընդհանուր կանոնադրության մշակումը)

Հոդ. 1. Խնամատարության մինիստրի տրամադրության տակ դրվում է 320.587 ռ. 50 կ.՝ վեց ամիս շարունակ օժանդակելու հայ բանակից 500 հաշմանդամ զորականների՝ սրան կցված նախահաշվի և կանոնների համաձայն:

Հոդ. 2. Հիշյալ վարկից խնամատարության մինիստրությունը պետք է նպաստ տա 85 հաշմանդամ սպայի, բժշկի, աստիճանավորի և գթության քույրերի և 415 հաշմանդամ զինվորների:

Հոդ. 3. Նայած աշխատանքի ունակության կորուստի չափին՝ ամեն սպա, բժիշկ, աստիճանավոր կամ գթության քույր ամսական ստանալու է.

I կարգին պատկանողը	-	300 ռ.
II - " - - " -	-	262 ռ. 50 կ.
III - " - - " -	-	206 ռ. 25 կ.
IV - " - - " -	-	187 ռ. 50 կ.
V - " - - " -	-	150 ռ.

Ամեն զինվոր ամսական ստանալու է.

I կարգին պատկանողը	-	120 ռ.
II - " - - " -	-	100 ռ.
III - " - - " -	-	80 ռ.
IV - " - - " -	-	60 ռ.
V - " - - " -	-	50 ռ.

Ծանոթ. հոդ. 3-ի - Առաջին կարգին պատկանող հաշմանդամ զինվորները ստանալու են ամսական 180 ռուբլի, եթե նրանք չեն ապրում իրենց ընտանիքներում կամ իրենց ազգականների մոտ:

Երկու օրինագծերն էլ վերջնականապես հաստատվում են:

Քարտուղար - Սոց.-դեմոկրատները մի շարք հարցեր են տվել, բայց կառավարության համապատասխան մինիստրները այստեղ չեն:

Ազատյան - Գավառ գնացող պառլամենտական կոմիսիային մենք ցանկանում ենք մարդ տալ, բայց չունենք: Եղածները կամ հիվանդ են և կամ էլ պիտի այստեղ լինեն, իսկ VI անդամ չունենք: Եթե մանդատային հանձնաժողովը վաղը առավոտյան ընդուներ մեր վեցերորդ անդամության թեկնածուին, այն ժամանակ մենք հնարավորություն կունենայինք պառլամենտական հանձնաժողովին անդամ տալ:

Նախագահող - Ոչ ոք դեմ չէ՞: Ընդունվում է:

Նիստը հայտարարում եմ փակված:

Քարտուղար՝ *Ե. Սարգսյան*